ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ(ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Ռեկտոր Է. Մ. Սանդոյան

№ 8 «04» ապրիլի 2025 թ.

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք» (հեռակա ուսուցում)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 Իրավագիտություն

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

042101.05.7 «Գործարարական իրավունք» մագիստրոսի կրթական ծրագիր, իրագործվող ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կողմից «042101.00.7 Իրավագիտություն»:

«Գործարարական իրավունք» մագիստրոսի կրթական ծրագիրը իրագործվում է հեռակա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 2,5 տարի:

Մագիստրոսի կրթական ծրագրի ծավալը կազմում է 120 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Իրավագիտության մագիստրոսի որակավորում շնորհվում է այն շրջանավարտներին, որոնք ունեն խոր և մասնագիտացված գիտելիքներ, հմտություններ, ինչպես նաև կարողություններ՝ իրավագիտության ոլորտում մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումը շարունակելու համար:

«Գործարարական իրավունք» մագիստրոսական կրթական ծրագիրը համապարփակ դասընթաց է մասնավոր իրավունքի համակարգում գտնվող իրավունքի հիմնական ճյուղերի և ենթաճյուղերի ուսումնասիրության վերաբերյալ: Ուսանողները ձեռք են բերում գիտական գործունեության փորձ, հնարավորություն ունենալով մասնակցելու միջազգային գիտագործնական գիտաժողովներին, ուսանողական մրցույթներին և այլն:

Այս մագիստրոսական ծրագրի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից քաղաքացիական, առևտրային շրջանառության շարունակական զարգացմամբ, ձեռնարկատիրական գործունեության տարբեր ոլորտների իրավական ուղեկցման կարևորության և այդ գործունեության ընթացքում ծագող տարատեսակ ռիսկերի բացահայտնամ և կառավարման անհրաժեշտության հետ:

Ժամանակակից մասնավոր իրավունքը ընդգրկում է պարտավորական և իրային իրավունքի կարևոր խնդիրներ, որոնք խորը ուսումնասիրության և գիտական

վերլուծության կարիք ունեն, առ այսօր շարունակվում են վեճերը պայմանագրի ազատության սահմանների որոշման վերաբերյալ, իրային և պարտավորական իրավունքների պաշտպանության միջոցների փոխհարաբերակցության վերաբերյալ, ինչից կախված են տնտեսական հարաբերությունների կենտրոնում գտնվող սեփականության իրավունքի պաշտպանության հարցերը:

Ծրագրի **նպատակն է** ընդլայնել և խորացնել ուսանողների գիտելիքները ժամանակակից գործարարական իրավունքի արդի խնդիրների վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մասնավոր իրավունքի առաջադեմ զարգացմանը՝ դրա հիմնարար սկզբունքներին ու հայեցակարգերին համահունչ: Մագիստրոսական ծրագիրն ուղղված է վերլուծական հմտությունների և կարողությունների զարգացմանը, այս ոլորտում ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, բարձր որակավորում ունեցող իրավաբանների վերապատրաստմանը, որոնք տիրապետում են քաղաքացիաիրավական գործիքներին, ինչպես նաև կազմակերպություններում իրավական խորհրդատվություններ տրամադրելու, գործարքների իրավական աուդիտ իրականացնելու (Due Diligence), քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների պաշտպանություն իրականացնելու և դատական ատյաններումհաջող աշխատանքի համար:

Մագիստրոսական ծրագրի **հիմնական խնդիրները**.

- ուսումնասիրել գործարարական իրավունքը՝ որպես ժամանակակից իրավագիտության հիմնարար երևույթ.
- հասկանալ գործարարական իրավունքի համակարգի էությունն ու առանձնահատկությունները.
- ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր և առանձին ոլորտների իրավական կարգավորման առանձնահատկությունները.
- ուսումնասիրել միջազգային տարրով ծանոթաբեռնված քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները:

Այս մագիստրոսական ծրագրի շրջանավարտները պահանջված են ձեռնարկատիրական գործունեություն ծավալող կազմակերպություններում, այդ թվում ֆինանսաբանկային համակարգում, դատական համակարգում:

2.2. Մագիստրոսի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրական պրակտիկաներ `

ՈՒսումնական պրակտիկա՝

- Գիտահետազոտական աշխատանք
- Գիտահետազոտական պրակտիկա

Արտադրական պրակտիկա՝

- Արտադրական պրակտիկա
- Մագիստրոսական թեզի նախապատրաստում
- Գիտամանկավարժական պրակտիկա

2.3 Պետական ավարտական ատեստացիան ներառում ՝

- Մագիստրոսական թեզի պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները ՝

1) Քաղաքացիական իրավունքի սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության, էության և կիրառման գործընթացի վերաբերյալ մասնագիտական խոր, համակարգված և համակողմանի տեսական և գործնական գիտելիք, այդ թվում՝ միջգիտակարգային և իրավահամեմատական համատեքստում:
2) Գիտական հետազոտությունների ընդհանուր և սոցիալ-իրավական մեթոդաբանության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք:
3) Իրավաընկալման հայեցակարգերի, քաղաքացիական իրավունքի զարգացման եղանակների, ինչ պեսնան՝ իրավագոյացման վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք:
4) խորը գիտելիքներ ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորման աձանձնահատկությունների, սեփականության իրավունքի պաշտպանության, պայմանագրային իրավունքի, պարտավորական հարաբերություններից բխող պահանջի իրավունքի պաշտպանության վերաբերյալ:

- ***գիտելիքի կիրառման հմտությունները*** ՝

1) Կարող է ինքնուրույն և համակողմանի որեն կիրառել մասնագիտական գիտելիքները նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական

իրավական հիմնախնդիրների լուծման համար։

2) Կարող է ինքնուրույն գտնել, դասակարգել և համակողմանի ու համակարգված մոտեցմամբ փաստարկված մեկնաբանել օրենսդրական կամ այլ տեղեկատվություն, այդ թվում՝ օտարալեզու, որն անհրաժեշտ է մասնագիտացման ոլորտում խնդրի լուծման համար։

3) Կարող է ինքնուրույն օգտագործել գիտական հետազոտության մեթոդներ՝ մասնագիտական գործունեություն ծավալելիս և անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելիս։

4) Կարող է ինքնուրույն կողմնորոշվել իր մասնագիտացման ոլորտի իրավական հիմնախնդիրները լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը։

5) Կարող է հետազոտական և նորարարական գործունեություն իրականացնելիս համակցել տարբեր ոլորտների գիտելիքներ և զարգացնել նոր գաղափարներ ու տեակետներ։

6) Իրավաստեղծման և մեկնաբանման ժամանակ հասկանալ քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անձնային և հոգեբանական գործոնները։

- *Ընդհանրական իմացական հմտությունները* ՝

Կարող է դրսևորել վերլուծական, ստեղծագործական, քննադատողական և նորարարական մոտեցում՝ մասնագիտացման ոլորտի, ինչպես նաև՝ հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների զարգացման համար։

Կարողունակությունը (կոմպետենցիան) ՝

1. ինքնուրույնությունը և պատասխանատվությունը ՝

1. Ունակ է ինքնուրույն ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն, ինչպես նաև գիտական ղեկավարման ներքո կատարելու անհրաժեշտ հետազոտություններ իրավագիտության ոլորտում։
2. Ունակ է՝ աշխատելու թիմում և (կամ) ղեկավարելու այն։
3. Ունակ է աշխատելու բազմամշակութային միջավայրում, արդյունավետ կերպով համագործակցելու սոցիալական տարբեր խմբերի և դրանց

ներկայացուցիչների հետ, նպաստելու այլ անձանց իրավական զարգացմանը:

4. Ունակ է բացահայտելու սեփական կրթական կարիքները և ինքնակրթվելու, ընտրելու մասնագիտական գործունեության զարգացման ուղին, պարբերաբար բարձրացնելու մասնագիտական որակավորումը, ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին, գործելու պատասխանատու և ազնվորեն:

5. Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

3. Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

<u>իրավաստեղծ գործունեություն</u>

2. Քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող նորմերի մշակում և իրականացում;
3. Գործարարական իրավունքի վերաբերյալ իրավական փաստաթղթերի կազմում:

<u>իրավակիրառ գործունեություն</u>

4. Քաղաքացիաիրավական հարաբերություններ, այդ թվում ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող նորմերի մեկնաբանություն;
5. աշխատանքային պարտականությունների շրջանակներում որոշումների հիմնավորում և ընդունում, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ իրավական նորմերի իրացման հետ կապված գործողությունների կատարում:

<u>փորձագիտական-վերլուծական գործունեություն</u>

6. ձեռնարկատիրական ոլորտում ծագած քաղաքացիաիրավական բնույթ կրող իրավական խնդիրների վերլուծություն և լուծումների մշակում:
7. ձեռնարկատիրական ոլորտում կնքվող գործարքների, դրանց օբյեկտների իրավական փորձաքննության իրականացում:

<u>մանկավարժական գործունեություն</u>

8. քաղաքացիական և առևտրային իրավունքի առարկաներ դասավանդելու ունակություն տեսական բարձր մակարդակով:

<u>գիտահետազոտական գործունեություն</u>

9. քաղաքացիական և առևտրային իրավունքի բնագավառում իրավական խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտությունների իրականացում:

4. Կրթական ծրագրի պահանջարկը.

«Գործարարական իրավունք» մագիստրոսական ծրագիրը պահանջված է ինչպես հիմնական իրավաբանական կրթություն ունեցողների, այնպես էլ հիմնական իրավաբանական կրթություն չունեցող ուսանողների շրջանում: Մագիստրատուրայի պահանջարկը կապված է առևտրային հարաբերությունների զարգացմամբ և ռիսկերը զսպելու համար դրա մասնակիցներին որակյալ իրավաբանական խորհրդատվության կարևորության նկատելի աճի հետ: Բացի դրանից, շարունակաբար զարգանում են միջազգային առևտրային հարաբերությունները, ինչի արդյունքում քաղաքացիական շրջանառության սուբյեկտները առնչվում են օտարերկրյա իրավակարգերի հետ, և նման պայմաններում առավել շուկայում պահանջված են միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ որակյալ գիտելիքներ ունեցող մասնագետները, որոնք կապահովեն իրենց վստահորդների իրավունքների պաշտպանությունը օտարերկրյա իրավակարգերում: Սույն ծրագիրը նախատեսում է ուսանողներին տրամադրել ինչպես նյութական իրավունքի, այնպես էլ դատավարական և կոլիզիոն իրավունքի վերաբերյալ խորը գիտելիքներ և դրանք իրական դեպքերի նկատմամբ կիրառելու հմտություններ: